Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

EREO
«ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՆՑ ՈՉԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"EQUAL RIGHTS, EQUAL OPPORTUNITIES"
PEOPLE WITH DISABALITY NON-GOVERNMENTAL ORGANIZATION



Սույն զեկույցը մշակվել է «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ-ի կողմից՝ «Մարդու իրավունքներ, մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագրի շրջանակներում : «Մարդու իրավունքներ, մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագիրն իրականացվում է «Հանուն Հավասար Իրավունքների» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ն, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Վանաձոր քաղաքի պետական կառույցների ֆիզիկական մատչելիության և մատուցվող ծառայությունների հասանելիության մոնիթորինգ»

ԶԵԿՈՒՅՑ

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպություն
Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թումանյան 9ա/2
Հեռ. (+374)(77)077-562
Էլ. հասցե ereo.hihhngo@gmail.com

Բովանդակություն

1. Հապավումներ 5

2. Համառոտագիր 6

3. Ներածություն 8

4. Մեթոդաբանություն 9

ԳԼՈՒԽ 1

5. Իրավական կարգավորումներ 11

ԳԼՈՒԽ 2

6. 2.1 Շինարարական նորմեր 14

7. 2.2 Ֆիզիկական մատչելիության դիտարկման արդյունքների ամփոփում 17

8. 2.3 15 հաստատությունների ղեկավարների հետ անցկացված հարցումների Ամփոփում 24

9. 2.4 Հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների հետ հարցազրույցներ Ամփոփում 28 **ԳԼՈՒԽ 3**

10. 3.1 Եզրակացություն 34

11. 3.2 Առաջարկություններ 35

12. Ուսումնասիրված նյութերի ցանկ 36

13. Ֆիզիկական մատչելիության դիտարկման քարտ 37

14. Ֆիզիկական մատչելիության վերաբերյալ հարցաթերթիկ պետական կառույցների տնօրենների /ղեկավարանձանց հետ 40

15. Ֆիզիկական մատչելիության վերաբերյալ հարցաթերթիկ հաշմանդամություն Ունեցող անձանց համար 43

Հապավումներ

ԱՄՆ ՄԶԳ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն ՀՀ՝

Հայաստանի Հանրապետություն

ՀԿ՝ Հասարակական կազմակերպություն ՀՈՒԱ՝

Հաշմանդամություն ունեցող անձ ԲՍԽ՝

Բնակչության սակավաշարժուն խմբեր ՀՈՒ՝

Հաշմանդամություն ունեցող

ՄԻՊ՝ Մարդու իրավունքների պաշտպան

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված են 188.051 հաշմանդամություն ունեցողներ: Հաշմանդամություն ունեցող անհատների (այսուհետ՝ՀՈՒԱ) մոտ 94.000-ի համար անհրաժեշտ է սոցիալ-միջավայրային հարմարեցում, որը հիմնականում կապված է մատչելի միջավայրի ապահովման հետ: Լոռու մարզում այսօր հաշվառված են տարբեր խմբերի հաշմանդամություն ունեցող 19.113 անձինք, որոնցից մոտ 3.000-ը՝ սայլակ օգտագործողներ են, 1.100-ը՝ քայլակ օգտագործողներ, մոտ 1.500-ը տեղաշարժվում են հենակներով, իսկ Վանաձորում բնակվում է հենաշարժողական խնդիրներով 2090 անձ: Լոռու մարզի Վանաձոր քաղաքի համար սոցիալական ոլորտի ամենասուր պրոբլեմներից են ՀՈՒԱ՝ հասարակական կյանքին լիարժեք ներառման խնդիրները: Հայաստանը որպես հետխորհրդային պետություն, այս առումով, ծանր ժառանգություն է ստացել: Խորհրդային ժամանակաշրջանում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով խորապես չեն զբաղվել, և այդ իսկ պատճառով նշված ժամանակահատվածում կառուցված փողոցներում, անցումներում, բնակելի և սոցիալական, հասարակական նշանակություն ունեցող շենք-շինություններում պարզապես անտեսվել են նրանց կարիքները, չեն եղել թեքահարթակներ, ընդհանրապես չեն արծարծվել տրանսպորտային մատչելիության կամ վերելակային հարմարավետության խնդիրները: Որպես օրինակ, նշենք Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքը, որը ոչ մի առումով հարմարեցված չէ ՀՈՒԱ-ների համար, և որը ըստ պետական այրերի ճարտարապետական արժեք է ու հնարավոր չէ հարմարեցնել: «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպության անդամները բազմիցս բարձրաձայնել են վերոնշյալ հիմնախնդիրները, սակայն այդպես էլ խնդրին լուծում չի տրվել:

Ներկայացվող հետազոտությունն անց է կացրել «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպությունը, «Մարդու իրավունքներ. Մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է՝ նպաստել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը՝ խթանելով ոլորտում հանրային քաղաքականության բարելավմանը: Առանձնահատուկ նպատակը՝ նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ ՀՈՒԱ) շահերի և իրավունքների պաշտպանությանը:

Սույն հետազոտության համար ընտրվել են հանրային նշանակություն ունեցող 15 պետական կառույցներ:

Այդ կառույցների ընտրությունը կատարվել է՝ ելնելով նրանց կողմից սպասարկվող բնակիչների թվաքանակից: Ընտրվել են այն կառույցները, որոնք Վանաձորից բացի, սպասարկում են նաև հարակից բնակավայրերի բնակիչներին: Արդյունքում ընտրված 15 կառույցները կարիքի դեպքում սպասարկում են գրեթե բոլոր բնակավայրերի բնակիչներին: Կառույցների ընտրության մյուս կարևոր պատճառներից մեկն էլ նա էր, որ առկա էր «եզակիության», «այլընտրանք չլինելու» հանգամանքը, այսինքն եթե տվյալ անձը ֆիզիկական անմատչելիության հետևանքով չի կարողանում մուտք գործել ներս և վերջինիս ծառայություններից օգտվել, ապա նմանատիպ այլ կառույց չկա, որպեսզի իր հարցի լուծումը ստանա այնտեղ: Այդ կառույցները մատչելիության տեսանկյունից դիտարկվել են դրսից և ներսից, անհատական հարցազրույցներ են անցկացվել այդ կառույցների ղեկավարների հետ, ինչպես նաև անհատական 200 հարցումներ են իրականացվել հենաշարժողական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց հետ:

Զեկույցը բաղկացած է 3 գլուխներից.

1. Իրավական կարգավորումներ
2. Շինարարական նորմեր և բացահայտումներ

3. Եզրակացություն և առաջարկություններ

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: Չնայած օրենքում պարբերաբար կատարվել են փոփոխություններ և լրացումներ, այնուամենայնիվ, ամրագրված սկզբունքներն ու մոտեցումները դարձել են ժամանակավրեպ և չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված և ճանաչված չափանիշներին: Գործող օրենսդրությամբ հաշմանդամություն ունեցող անձ է համարվում այն անձը, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Այս մոտեցումը հիմնված է առավելապես հաշմանդամության բժշկական մոդելի վրա, որի դեպքում հաշվի չեն առնվում անձի գործունեության և մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին գործոնները, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ դրանց վրա:

Չնայած վերջին տարիներին հասարակական սեկտորը իրականացրել է հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված մի շարք միջոցառումներ, սակայն իրավիճակը մնում է անբավարար: Հիմնախնդիրը այդպես էլ անբավարար կմնա, քանի որ պետական սեկտորի կողմից դեռևս ծանրակշիռ գործնական քայլեր չեն արվում իրավիճակը փոխելու ուղղությամբ:

Իրավիճակի արմատական և աստիճանական բարելավման համար պետք է մշակել լայնամասշտաբ գործողությունների ծրագիր: Այն կներառի օրինակ՝ մինչև 2025թ. քաղաքաշինական և ինժեներական ենթակառույցների, տրանսպորտային, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային, սոցիալական ենթակառուցվածքի հիմնարկների հիմնական մատչելիությանը և հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

Ներածություն

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպությունը սույն հետազոտությունն անց է կացրել «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է՝ նպաստել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը՝ խթանելով ոլորտում հանրային քաղաքականության բարելավմանը: Առանձնահատուկ նպատակը՝ նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ ՀՈՒԱ) շահերի և իրավունքների պաշտպանությանը: Հետազոտությունն իրականացվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում: Ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է «Հանուն հավասար իրավունքների» կոնսորցիումի անդամ հանդիսացող «Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Իրավունքի Ուժ» և «Ազատ Լրագրողներ» ՔՀԿ-ների համագործակցությամբ: Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ ղեկավարությամբ գործող կոնսորցիումի միջոցով:

Վերջին տասնամյակում Հայաստանում սկիզբ է առել և աստիճանաբար արմատավորվում է հաշմանդամների նկատմամբ մարդու իրավունքի վրա հիմնված արդիական մոտեցումների և սկզբունքների որդեգրման գործընթացը: Փոխվել է հաշմանդամության գաղափարախոսությունը, փոխվել են մոտեցումները՝ բժշկական մոդելը փոխարինվել է սոցիալական մոդելով, ինչը ենթադրում է ոչ միայն հավասար իրավունքներ, այլև՝ հավասար հնարավորություններ և պարտականություններ: Այս գաղափարախոսությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության հիմքում: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննական գործակալության տեղեկատվության, 2018թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազայում (հաշմանդամության վարչական ռեգիստրում) ընդգրկված է 188 051 հաշմանդամ[1]: Ելնելով **«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքից, որը ուժի մեջ է մտել 1993թ.**, չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառույցների, ներառյալ օդանավակայանների և երկաթուղային կայանների շինարարությունն ու վերակառուցումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, այդ թվում անհատական, կապի և տեղեկատվության միջոցների մշակումն ու արտադրությունը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար: Ստորագրելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» (ՀՈՒԱԻ) ՄԱԿ-ի կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորություն է ստանձնել աջակցել, պաշտպանել և ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք կիրառումը հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար: Կոնվենցիան ոչ միայն հաստատում է հաշմանդամության սոցիալական մոդելը, այլև այն նոր մակարդակի վրա է դնում՝ «հստակ ճանաչելով հաշմանդամությունը որպես մարդու իրավունքների խնդիր: Այս տեսանկյունից սոցիալական, իրավական, տնտեսական, քաղաքական և միջավայրային պայմանները, որոնք հաշմանդամություն ունեցողներին խոչընդոտում են լիովին իրացնել իրենց իրավունքները, պետք է հայտնաբերվեն և հաղթահարվեն»: Ինչպես ՀՀ մյուս բնակավայրերում, այնպես էլ Վանաձորում, սոցիալական ենթակառույցները՝ բուժական, կրթական, մշակութային, մարզական և այլ շինությունները, հիմնականում հարմարեցված չեն ՀՈՒԱ- ներին:

[1] ՀՀ Սոցիալ-Տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հունիսին՝ կետ 5. Սոցիալ-Ժողովրդագրական հատված՝ http://www.armstat.am/file/article/sv_06_17a_540.pdf,

Մեթոդաբանություն

Մշտադիտարկման նպատակն է՝ Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ ՀՈՒԱ) շահերի և իրավունքների պաշտպանությանը:

<u>Խնդիրներն են՝</u>

- Ձևավորել և վերապատրաստել մշտադիտարկման խմբեր, որոնք կիրականացնեն հարցազրույցներ և դիտարկումներ Վանաձորքաղաքում:
- Իրականացնել մշտադիտարկում Վանաձորի 15 հանրային կառույցներում՝ ՀՈՒԱ-ին մատուցվող ծառայությունների հասանելիության վերաբերյալ:
- Վերլուծել մշտադիտարկման արդյունքները և մշակել առաջարկություններ՝ բացահայտված խնդիրները հասցեագրելու համար,
- Ներկայացնել առաջարկությունների փաթեթը ոլորտի որոշում կայացնողներին: **Ընտրանք**

Վանաձորում մշտադիտարկման համար ընտրվել են հանրային նշանակության 15 պետական կառույցներ:

Այդ կառույցների ընտրությունը կատարվել է՝ ելնելով նրանց կողմից սպասարկվող բնակիչների թվաքանակից: Ընտրվել են այն կառույցները, որոնք Վանաձորից բացի, սպասարկում են նաև հարակից բնակավայրերի բնակիչներին: Արդյունքում ընտրված 15 կառույցները կարիքի դեպքում սպասարկում են Գուգարքի տարածաշրջանի բոլոր, իսկ մի շարք կառույցներ՝ նաև Լոռու մարզի գրեթե բոլոր բնակավայրերի բնակիչներին.

- ✓ Լոռու մարզպետարան,
- ✓ Վանաձորի քաղաքապետարան,
- ✓ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի «Վանաձոր» սպասարկման գրասենյակ,
- ✓ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի սպասարկման թիվ 16 բաժին,
- ✓ Սոցիալական ապահովության ծառայության Վանաձորի տարածքային բաժին,
- ✓ Վանաձոր Նոտարական տարածքի գրասենյակ,
- ✓ Անձնագրային և վիզաների վարչության Վանաձորի «Տարոն» անձնագրային բաժանմունք,
- ✓ Վանաձորի ոստիկանության «Բազումի» վարչություն,
- ✓ Վանաձորի ոստիկանության «Տարոնի» Վարչություն,
- ✓ Դատական ակտերի հարկադիր կատարման Լոռու մարզային բաժին,
- ✓ Լոռու մարզի դատախազություն,
- ✓ Վանաձորի պետական համալսարան,
- ✓ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Վանաձորի մասնաճյուղ,
- ✓ Քաղաքացիական կացության ակտերի գրանցմանգործակալության Վանաձորի տարածքային բաժին:

Մեթոդներ

Մոնիթորների և ծրագրի աշխատակազմի կողմից իրականացվող ուսումնասիրությունների և հետազոտությունների համար ընտրվել է հետևյալ մեթոդաբանությունը՝ դրսից և ներսից 15 կառույցների մատչելիության դիտարկում, անհատական հարցազրույցներ այդ կառույցների ղեկավարների հետ, անհատական հարցումներ հենաշարժողական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց հետ:

Հարցումներն անց են կացվել անանուն: Ընդհանուր առմամբ հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ ունեցողների և մանկուց հաշմանդամություն ունեցողների ծնողների շրջանում անց է կացվել 200 հարցում:

Պատահականության սկզբունքով հարցումներն անց են կացվել հեռախոսազանգի միջոցով:

Քանակական հետազոտության համար հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամներից պատահականության սկզբունքով ընտրվել են 200 մարդ:

Մոնիթորների ընտրություն

Մոնիթորների ընտրությունը կատարվել է հայտերի հիման վրա: Հավաքագրումը կատարվել է հայտարարության տարածման և գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով: Ստացված մասնակցության էլեկտրոնային հայտերից և գործընկեր կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերից ընտրվել են 3 խմբերի 3-ական և 2-ական ներկայացուցիչներ: մոնիթորների թիվը (թվով 8 մոնիթոր՝ ֆիզիկական միջավայրի մշտադիտարկում իրականացնելու համար և թվով 4 մոնիթոր՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ հարցումներ իրականացնելու համար): Հիմնականում ընտրվել են այն թեկնածուները, որոնք հարցի կարևորության նկատմամբ շահագրգիռ հետաքրքրություն են ցուցաբերել: Մոնիթորների կազմում ներգրավվել են հաշմանդամություն ունեցողներ, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ, շահագրգիռ քաղաքացիներ և ակտիվ երիտասարդներ: Յուրաքանչյուր խումբ մշտադիտարկեց 5 կառույց:

Ֆիզիկական միջավայրի մշտադիտարկման նպատակով մոնիթորները բաժանվեցին խմբերի: Յուրաքանչյուր խմբում ներգրավվել են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձիք (տեղաշարժվում են անվասայլակով և քայլակով).

- Առաջին խումբ- 3 անձ (անվասայլակով տեղաշարժվող այլ հաշմանդամություն ունեցող անձիք և 1 օգնական)
- Երկրորդ խումբ - 3 անձ (քայլակով տեղաշարժվող անձ, այլ հաշմանդամություն ունեցող անձ և 1 օգնական)
- Երրորդ խումբ- 2 անձ (հենաշարժողական խնդիր ունեցող և հաշմանդամություն չունեցող անձիք)

ԳԼՈՒԽ 1. Իրավական կարգավորումներ

ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի[2] (Կոնվենցիան ՀՀ համար ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին) Հոդված 9-ը սահմանում է. «Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները, որոնք ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը, կիրառվում են մասնավորապես. ա) կառույցների, ճանապարհների, փոխադրամիջոցների, բացօթյա և փակ հաստատությունների, այդ թվում՝ դպրոցների, բնակելի տարածքների, բժշկական հաստատությունների և աշխատավայրերի նկատմամբ»:

Կոնվենցիայի վավերացմամբ պետությունը պարտավորվել է նախաձեռնել այնպիսի օրենսդրական փոխոխություններ և իրականացնել այնպիսի պետական քաղաքականություն, որը կհամապատասխանի Կոնվենցիայի դրույթներին:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները և միջազգային լավագույն փորձը՝ հաշմանդամության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման հիմքում դրվել է հաշմանդամության սոցիալական մոդելը, որը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում հավասար պայմանների ստեղծման և հավասար հնարավորությունների ապահովման միջոցով հասնել բոլոր քաղաքացիների լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Ավելին, սոցիալական մոդելը շեշտը դնում է երկրի զարգացման բոլոր գործընթացներին հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցության վրա: Այս մոտեցմամբ ունեցող անձանց մասնակցային գործընթացի ապահովումը:

«Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի[3] գլուխ 5-ը մատնանշում է, որ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը ուժի մեջ է մտել 1993թ., չի թույլատրում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառույցների, ներառյալ օդանավակայանների և երկաթուղային կայանների շինարարությունն ու վերակառուցումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, այդ թվում անհատական, կապի և տեղեկատվության միջոցների մշակումն ու արտադրությունը, եթե դրանք հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար հարմարեցված չեն:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը[4], որը ուժի մեջ է մտել 1998թ., սահմանում է ՀՀ-ում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում է այդ գործունեության հետ

---

[2] ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիա՝ http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf [3] «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90419

4 «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=69797

կապված հարաբերությունները, մի քանի դրույթներում անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի անհրաժեշտությանը:

Օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ կառավարությունը քաղաքաշինության բնագավառում ապահովում է հաշմանդամություն ունեցող մարդկանց համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը: Հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմերը Քաղաքաշինական նորմատիվ- տեխնիկական փաստաթղթերի համակարգի մասն են: Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար: Քաղաքաշինական նորմատիվ- տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար:

ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» թիվ 392-Ն որոշմամբ[5] բնակելի (բացառությամբ ֆիզիկական անձանց կողմից կառուցվող անհատական բնակելի տների), հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է՝ հաշվի առնելով ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններն ապահովող միջոցառումների իրականացումը:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը փաստաթուղթ է, որը Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությամբ, ինչպես նաև քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության ու այլ նորմատիվ պահանջներին համապատասխան սահմանում է տվյալ տարածքում քաղաքաշինական գործունեության օբյեկտի նախագծման և շինարարության պարտադիր պայմանները և սահմանափակումները:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» թիվ 253-Ն հրամանով[6] ամրագրվում են մի շարք շինարարական նորմեր:

Այդ նորմերին համապատասխան վարչական սահմաններում ճարտարապետահատակագծային առաջադրանքը կառուցապատողին տալիս է համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, Երևան քաղաքում՝ քաղաքապետը:

Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման դեպքում, եթե ճարտարապետահատակագծային առաջադրանքով և սահմանված կարգով համաձայնեցված ու հաստատված նախագծային փաստաթղթերով նախատեսված է այդպիսի պայման:

ՀՀ Կառավարության 2017թ. Հունվարի 12-ի նիստի N1 որոշմամբ հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը» որը միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականության կարևորագույն փաստաթուղթ է: Այն դարձել է

5 ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի թիվ 392-Ն որոշում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=23339
6 «ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=30091

ոլորտում առաջիկա տարիների սոցիալական ներառման քաղաքականության իրականացման ուղեցույցը՝ նպաստելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու լիարժեք սոցիալական ներառմանը: Համալիր ծրագրի նպատակներից ու խնդիրներից են նաև.

- ՀՈՒԱ զբաղվածության մակարդակը, ապահովել հավասար իրավունքներ աշխատանքի տեղավորման, մատչելի աշխատատեղերի ստեղծման, աշխատանքային սոցիալական միջավայրի ձևավորման հարցերում, Ապահովել քաղաքաշինական միջավայրի մատչելիությունը միջազգային պահանջներին համապատասխան.
- Ապահովել մատչելի տրանսպորտ հաշմանդամություն ունեցող անձանց համար.
- Բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնման գործընթացի արդյունավետությունը:

Համալիր ծրագրի ակնկալվող արդյունքներից է 2021թ. հասնել նրան որ, շենքերի ու շինությունների կառուցման և շահագործման ժամանակ միջազգային առաջադեմ պահանջները հաշվի առնվեն, և ՀՀ գործող հասարակական նշանակության շենքերի ու շինությունների առնվազն 25 % հարմարեցվեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան:

Այժմ թեև օրենսդրական կարգավորումների առկայությանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար միջավայրի մատչելիությունը շարունակում է անտեսվել քաղաքաշինական գործունեություն իրականացնողների կողմից:

Խնդրահարույց է կառուցված շինության (այդ թվում՝ վերակառուցված, վերականգնված, ուժեղացված, արդիականացված, ընդլայնված) շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և, ըստ գործառնական նշանակության, շահագործման ընդունումը փաստագրող ավարտական ակտի (շահագործման թույլտվություն) տրամադրումը: Համայնքի տարածքում ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) տալիս է համայնքի ղեկավարը, իսկ ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստվում է ընդունող հանձնաժողովի ակտով:

Ընդունող հանձնաժողովի կազմում ներգրավվում են կառուցապատողի, կապալառուի, տեխնիկական հսկողություն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձինք, քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի, մատակարար կազմակերպությունների, ինչպես նաև օրենքով համապատասխան վերահսկողական իրավասություններով օժտված այլ շահագրգիռ պետական մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ պետական մարմին) և իրավասու մարմնի ներկայացուցիչները:

Ընդունող հանձնաժողովի անդամն ակտը չստորագրելու դեպքում հանձնաժողովի նախագահին է տրամադրում իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները: Նշված թերությունները պետք է վերացվեն շինարարական կապալի պայմանագրով սահմանված ժամկետում, այլապես օբյեկտը հանձնաժողովի կողմից չի ընդունվում:

Գլուխ 2 Շինարարական նորմեր և բացահայտումներ

Այս գլխում անդրադառնում ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» թիվ 253-Ն հրամանով[7] ամրագրված մի շարք շինարարական նորմերին: Ներկայացված է նաև մշտադիտարկման արդյունքները:

2.1 Շինարարական նորմեր

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» թիվ 253-Ն հրամանով ամրագրվում են մի շարք շինարարական նորմեր:

Հրամանի 1.1 կետը սահմանում է Սույն փաստաթղթի պահանջները տարածվում են բնակչության սակավաշարժուն խմբերի (այսուհետև՝ ԲՍԽ) համար մատչելի շենքերի և շինությունների ֆունկցիոնալ-հատակագծային տարրերի, դրանց տեղամասերի, մուտքային հանգույցների, հաղորդակցությունների, տարահանման ուղիների, բնակության, սպասարկման և աշխատատեղերի սենքերի (գոտիների), ինչպես նաև դրանց տեղեկատվական և ինժեներական սարքավորվածության վրա:

Հրամանի 5.1.1 կետով ամրագրված է, որ շենքերի նախագծերում պետք է նախատեսված լինեն ԲՍԽ համար անարգելք և հարմար տեղաշարժման պայմաններ, շենքին մոտեցման հողամասով կամ կազմակերպության շինությունների համալիրների տարածքով՝ հաշվի առնելով քաղաքաշինական նորմերի պահանջները: ԲՍԽ-երի համար մատչելի շարժման բոլոր ուղիներում պետք է ապահովված լինի տեղեկատվական աջակցության միջոցների համակարգ, իսկ տեղամասում ստորգետնյա և վերգետնյա անցումների առկայության դեպքում, դրանք անհրաժեշտ է սարքավորել թեքահարթակներով կամ վերամբարձ սարքվածքներով, եթե ԲՍԽ-երի համար հնարավոր չէ կազմակերպել գետներես անցում:

Ըստ հրամանի 5.1.6 կետի՝ հետիոտնային ուղիների ծածկույթի վրա նախազգուշական ֆունկցիա կատարող շոշափողական (տակտիլ) միջոցները պետք է տեղադրել տեղեկատվության օբյեկտից՝ վտանգավոր հատվածի սկզբից, շարժման ուղղության փոփոխումից, մուտքից և այլն, ոչ պակաս, քան 0,8 մ հեռավորության վրա:

Ըստ Հրամանի՝ մուտքը տարածք կամ տեղամաս հարկավոր է սարքավորել օբյեկտի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով: Սպասարկման կազմակերպությունների մոտ բաց անհատական ավտոկայանատեղերում հաշմանդամների ավտոտրանսպորտի համար հարկավոր է հատկացնել 10%-ից ոչ պակաս (առնվազն մեկ) տեղ: Այդ տեղերը պետք է նշանակվեն միջազգային պրակտիկայում ընդունված նշաններով:

5.2.1 կետը սահմանում է, որ շենքում պետք է լինի ԲՍԽ-երի համար հարմարեցված առնվազն մեկ մուտք հողի մակերևույթից և ԲՍԽ-երին մատչելի այդ շենքի հետ միացված յուրաքանչյուր ստորգետնյա կամ վերգետնյա անցումից:

5.2.2 կետով պահանջվում է, որ արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնաձողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան: Շենքի հիմնական մոտեցումներում սանդուղքների 2,5 մ և ավելի լայնության դեպքում, լրացուցիչ հարկավոր է նախատեսել բաժանիչ բռնաձողեր: ԲՍԽ-երին մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման

[7] «ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=30091

առաջադրանքով: Մուտքային հարթակների և նախամուտքերի ծածկերի մակերեսները պետք է լինեն պինդ, թրջվելու դեպքում չպետք է սահեն և պետք է ունենան լայնական թեքություն 1-2 %-ի սահմաններում:

Հրամանի 5.3.2 և 5.3.6 կետերի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի երթևեկության ուղիներում սանդուղքների աստիճանները պետք է լինեն հոծ, հարթ, առանց ելուստների և խորդուբորդ մակերևույթով: Բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնածողերով պատնեշներ:

5.6.4 կետը սահմանում է, որ սենքերի և հաղորդակցուղիների լուսավորումը հարկավոր է բարձրացնել մեկ աստիճանով: Ինչպես նաև 5.6.8. կետի համաձայն սենքերում անջատիչները և վարդակները պետք է նախատեսել հատակի մակարդակից 0,8 մ բարձրության վրա:

Համաձայն 5.7.1 կետի՝ հասարակական զուգարաններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում տեղադրված անհրաժեշտ է նախատեսել առնվազն մեկ ունիվերսալ խցիկ՝ մատչելի բոլոր կարգերի քաղաքացիների համար: Զուգարանները պետք է լինեն յուրաքանչյուր հարկում, ընդ որում, խցիկների ընդհանուր թվաքանակից առնվազն մեկը պետք է լինի ունիվերսալ:

Հրամանի 5.2.5 կետի համաձայն՝ սենքերը հարկավոր է տեղադրել հողի մակերևույթին ամենամոտ մուտքի մակարդակի վրա: Սենքերի այլ տեղադրման դեպքում, շենքի բարձրությամբ, բացի սանդուղքներից, հարկավոր է նախատեսել նաև թեքահարթակներ, ամբարձիչ հենահարթակներ, վերելակներ կամ հաշմանդամների տեղափոխման այլ հարմարանքներ:

5.6.5 կետը պահանջում է, որ ԲՍԽ-երի կողմից հաճախվող հասարակական շենքերի և շինությունների սենքերն ու գոտիները, ինչպես նաև հաշմանդամների աշխատատեղերով արտադրական սենքերը, հարկավոր է սարքավորել հրդեհի ազդարարման համակարգին միացված սինխրոն (ձայնային և լուսային) ազդանշանմամբ:

Իսկ 5.2.11 կետի համաձայն՝ դռների բացվածքները չպետք է ունենան շեմ և հատակի բարձրությունների անկում: Շեմեր սարքելու անհրաժեշտության դեպքում, դրանց բարձրությունը կամ բարձրությունների անկումը չպետք է գերազանցի 0.025 մ:

Բացի վերոնշյալ նորմատիվներից նաև ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2018 թվականի ապրիլի 5-ի N 43 - Ա հրամանով հաստատված է ԲՍԽ և ՀՈՒԱ համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուն[8]:

Ըստ այդ կանոնների, օրինակ՝ թեքահարթակը պետք է կազմված լինի 3 մասից՝ 1.հիմնային մասում հորիզոնական տարածություն, 2.զառիվեր մակերես, 3. վերին մակարդակի հորիզոնական տարածություն: Թեքահարթակի նվազագույն թույլատրելի լայնությունը 90 սմ է: Թեքությունը չպետք է լինի 1:12, իսկ մինչև
20 սմ բարձրության դեպքում՝ 1:10 հարաբերությունից ավել: Եթե թեքահարթակը չի փոխում իր ուղղությունը, ապա միջանցիկ հորիզոնական հատվածի լայնությունը պետք է հավասար լինի թեքահարթակի լայնությանը 90 սմ, իսկ երկարությունը՝ 150 սմ: Եթե թեքահարթակը շրջափակված չէ պատերով, ապա դրա ներքին կողային հատվածների մոտ պետք է նախատեսվեն մոտավորապես 5 սմ բարձրությամբ եզրազարդեր անվասայլակի սայթաքումը կանխելու համար: Սահմանազատող եզրազարդը թեքահարթակի կարևոր մասն է:

[8] ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 5-ի N 43 - Ա հրաման
http://www.minurban.am/lows/files/305259015_11.Hraman.pdf?fbclid=IwAR0Cm4zAe_TBUtbxeu571Mh3DHooEzoY2f1Zf3wAP9Cj2J0wJAYXpYK1K5Y

Եթե թեքահարթակի թեքությունը գերազանցում է 8 տոկոսը (1:12), կամ նրա հորիզոնական երկարությունը գերազանցում է 180 սմ, ապա թեքահարթակի երկու կողային հատվածներում պետք է կառուցվեն սահմանազատող բազրիքներ: Թեքահարթակի բազրիքների բռնակները ցանկալի է նախատեսել կրկնակի՝ 70 սմ և 90 սմ բարձրության վրա: Բռնակների երկարությունը պետք է լինի թեքահարթակի երկարությունից ավել՝ յուրաքանչյուր կողմից առնվազն 30 սմ-ով:

Շենքերի և հաստատությունների մուտքի դռները պետք է ունենան 90 սմ-ից ոչ պակաս լայնություն: Անվասայլակի մանևրելու համար նախատեսված տարածության երկարությունը դռան առջև պետք է լինի 150 սմ-ից ոչ պակաս: Դա վերաբերում է նաև թեքահարթակի առջևի դռանը և մնացած այլ դռներին:

Վարչական սահմաններում ճարտարապետահատակագծային առաջադրանքը կառուցապատողին տալիս է համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, Երևան քաղաքում՝ քաղաքապետը:

Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման դեպքում, եթե ճարտարապետահատակագծային առաջադրանքով և սահմանված կարգով համաձայնեցված ու հաստատված նախագծային փաստաթղթերով նախատեսված է այդպիսի պայման:

2.2 Ֆիզիկական մատչելիության դիտարկման արդյունքների ամփոփում

Դիտարկման են ենթարկվել Վանաձորում գործող 15 հասարարական նշանակության պետական հաստատություններ:

1. **Դիտարկվել են հաստատությունների հիմնական մուտքերի՝ դարպասների/տարածքի մուտքի մոտ խոչընդոտների կամ արգելքների առկայությունը**

Գծապատկեր 1. Հիմնական մուտքի մոտ բորդյուրի առկայություն (%)



Գծապատկեր 2. Հիմնական մուտքի մոտ 1-10 մ երկարությամբ թեքահարթակի առկայություն (%)



Ինչպես երևում է Գծապատկեր 1-ից և Գծապատկեր 2-ից, հաստատությունների 67%-ը հիմնական մուտքի մոտ չունի թեքահարթակ, գրեթե բոլոր հաստատություններում եղել են մի շարք խոչընդոտներ: Մասնավորապես՝ դարպասները մատչելի չեն եղել ներս մտնելու համար, եղել են բարձր աստիճաններ, բորդյուր, հավասարեցված անհարթ մայթ: Հաստատությունների 66%-ի հիմնական մուտքի մոտ եղել են 1- 5 հատ աստիճաններ, իսկ 34%-ի մոտ՝ 5-ից ավելի: Աստիճանների առկայությամբ հաստատությունների 8
%-ի մոտ եղել են 1-10 սմ, 83 %-ի մոտ՝ 11-15 սմ, իսկ 9%-ի մոտ դրանք 15 սմ-ից ավելի են եղել: Աստիճանների վրա բազրիք եղել է միայն 33 %-ի մոտ:

2. **Դիտարկվել են շինությունների/կառույցների մուտքերի մոտ խոչընդոտների կամ արգելքների առկայությունը**

Գծապատկեր 3. Շինության մուտքի մոտ թեքահարթակի առկայություն (%)



Եթե հաստատությունների 67 %-ի հիմնական մուտքի մոտ մոտ առկա չէ թեքահարթակը, ապա շինության ներս մուտք գործելու համար 65 %-ի մոտ առկա է եղել թեքահարթակ: Ընդ որում դրանց 60 %-ը հարմարեցված է բազրիքով և 30 %-ն ապահովված է նաև ծածկով:

Թեքահարթակների 10%-ը պատրաստված են եղել ասֆալտից, բետոնից՝ 70%, բազալտե սալիկներից՝ 20%:

Գծապատկեր 4. Շինության մուտքի դուռ / փեղկերի քանակը (%)



Աղյուսակ 1. Դռների փեղկերի լայնությունը

Մեկ փեղկի լայնությունը	%	Երկրորդ փեղկի լայնությունը	%
Մինչև 80 սմ	**54**	Մինչև 80 սմ	**86**
81-120 սմ	**46**	81-120 սմ	**14**

Ինչպես երևում է Գծապատկեր 4-ից և Աղյուսակ 1-ից, դիտարկված շինություններից միայն 20 %-ն ունի մեկ փեղկանի մուտքի դուռ, իսկ մյուսների դռները թեև երկփեղկանի են, սակայն 54 %-ի երկրորդ դուռը չի բացվում: Բացի այդ, մուտք դռների 54 %-ի մոտ լայնությունը մինչև 80 սմ է, և միայն 46 %-ի մոտ է այն 80 սմ-ից ավելի:

Մշտապես սայլակ օգտագործողները շինություն մուտք գործելու համար օգտագործում են առաջնային մուտքի դուռը, որը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ստանդարտներին, սակայն ակնհայտ է, որ հաստատությունների մեծ մասը չի ապահովում դրանք: Թեքահարթակի բացակայությունից և աստիճաններից բացի, հաշմանդամութուն ունեցողների համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում նաև մուտքի դուռը, երբ այն մեկփեղկանի և նախատեսված չափերից նեղ է, կամ երկփեղկանի է, սակայն երկրորդ փեղկը չի բացվում:

Շինությունների 46 %-ում մուտքի դուռը բավական մատչելի է եղել սայլակ օգտագործող հաշմանդամների համար, որոնք կարողանում են այն բացել, իսկ 54%-ում այդ հնարավորությունը չի եղել: Շինությունների մուտքի դուռը հիմնականում՝ 93 %-ի մոտ տանում է առաջին հարկ, իսկ 7 %-ի մոտ՝ միջանցք:

Բացի թվարկվածները, խոչընդոտ կարող է հանդիսանալ նաև դռնից առաջ կամ հետո տեղադրված շեմը: Դիտարկված շինությունների 54 %-ում առկա է եղել այդ շեմը, որից հիմնական մասի՝ 90 %-ի մոտ այն եղել է 5 սմ:

Մուտքի դուռը հաղթահարելուց հետո սայլակ օգտագործողները, հենաշարժողական խնդիրներ ունեցող ՀՈՒԱ-ը բախվում են մեկ այլ խոչընդոտի ևս՝ միջանցքում, մուտքից հետո կրկին լինում են աստիճաններ, որոնք պետք է հաղթահարել:

Գծապատկեր 5. Աստիճանների առկայություն շքամուտքից հետո (%)



Գծապատկեր 6. Մեկ աստիճանի բարձրությունը (%)



3. Դիտարկվել են այլընտրանքային մուտքերն ու դրանց մոտ խոչընդոտների կամ արգելքների առկայությունը

Աստիճաններից բացի եղել են նաև այլ խոչընդոտներ՝ օրինակ, բարձր սեղան, նեղ միջանցք, բարձր շեմ, նեղ անցակետ: Այս դեպքերում խիստ անհրաժեշտ է այլընտրանքային դուռը: Դիտարկված հաստատություններից միայն 20 %-ը չեն ունեցել այլընտրանքային դուռ: 26 %-ն ունի, բայց առհասարակ այն չի օգտագործում, իսկ 54 %-ի մոտ այլընտրանքային դուռը գտվել է 10-40 մ հեռավորության վրա:

Գծապատկեր 7. Այլընտրանքային մուտքի նշանակությունը (%)



Գծապատկեր 8. Այլընտրանքային մուտքի հասանելիությունը (%)



Հաստատությունների այլընտրանքային մուտքի մայթեզրի 50 %-ի մոտ չի եղել բորդյուր, 20 %-ի մոտ այն եղել է մինչև 10 սմ, իսկ 30 %-ի մոտ ունեցել է 11 և ավելի սմ լայնություն: Այլընտրանքային մուտքն այդ հաստատություններում թերևս օգտագործվում է որպես բեռների փոխադրման և սայլակների տեղափոխման համար, սակայն որևէ այլընտրանքային դռան մոտ չի եղել թեքահարթակ: Այդ դռների մոտ խոչընդոտները եղել են ավելի շատ, 60 %-ի մոտ առկա են եղել աստիճաններ, մնացած 40 %-ի մոտ այլ խնդիրներ են եղել: Մուտքի աստիճանների 50 %-ը եղել են մինչև 5 հատ, 10-ը %-ը՝ 5-ից ավելի, իսկ

աստիճանների բարձրությունը 83 % -ի մոտ եղել է 10-15 սմ, 17 %-ի մոտ՝ 16 սմ–ից ավելի: Այդ աստիճանների 71 %-ի մոտ բացակայել են բազրիքները և 40 %-ի մոտ եղել է բարձր շեմ:

Գծապատկեր 9. Այլընտրանքային մուտքից դեպի ներս թեքահարթակի առկայություն



Գծապատկեր 10. Այլընտրանքային մուտքի դուռ / փեղկերի քանակը (%)



Աղյուսակ 2. Այլընտրանքային մուտքի դռան փեղկերի լայնությունը

Մեկփեղկիլայնությունը	%	Երկրորդ փեղկի լայնությունը	%
Մինչև 80 սմ	**88**	Մինչև 80 սմ	**88**
81-120 սմ	**12**	81-120 սմ	**12**

Հաստատությունների այլընտրանքային մուտքը ևս ունեցել է շեմ, որոնցից 28 %-ի մոտ այն եղել է մինչև 5 սմ, 28-%-ի մոտ՝ մինչև 10 սմ, 28 %-ի մոտ՝ 11 սմ և ավելի է, իսկ շեմ չի եղել ընդամենը 14 %-ի մոտ: Մուտքը հաղթահարելուց հետո այն տանում է գետնահարկ 28 %, առաջին հարկ 71 %: Մուտքից հետո շինության այլընտրանքային մուտքի 50 %-ի ներսում եղել են մինչև 5 հատ աստիճան, 5-ից ավելի աստիճաններեն եղել 25 %-ի մոտ և միայն 25 %-ի մոտ է աստիճաններ չեն եղել:

Այլընտրանքային մուտքերը բոլոր հաստատություններում եղել են բացարձակ անմատչելի:

4. Դիտարկվել է իրավիճակը հաստատությունների ներսում

Գծապատկեր 11. Շինությունների մատչելիությունը (%)



Առաջին հարկ

Առաջին հարկում մինչև համապատասխան վայր հասնելը ևս լինում են աստիճաններ, որոնք նույնպես անհրաժեշտ է հաղթահարել: Դիտարկված շինությունների 46 %-ի ներսում այդպիսի աստիճաններ չկան, 15 %-ի մոտ կա մինչև 5 աստիճան, 7 %-ի մոտ՝ մինչև 10 աստիճան, իսկ 32 %-ի մոտ աստիճանները 10-ից ավելի են: Դիտարկված հաստատությունների 53 %-ում առկա է եղել ընդունարան:

Գծապատկեր 12. Ընդունարանի մատչելիությունը/սեղանի և դռների հարմարությունը սայլակ օգտագործողների համար (%)



Շինությունների ներսը բավականաչափ հարմար է և նրանցից 80 %-ի ներսում սայլակ օգտագործողները կարող են մատչելի տեղաշարժվել: Ինչ վերաբերում է առանձին հարկեր ունեցող հաստատություններին, ապա բոլորում եղել են առանց թեքահարթակի աստիճաններ և 93 %-ի մոտ չի եղել վերելակ: 7%-ն էլ, ունենալով վերելակ, այն օգտագործում է միայն բեռներ տեղափոխելիս և խիստ անհրաժեշտության դեպքում, թեև այդ վերելակները մատչելի են սայլակ օգտագործողների համար և մինչև վերելակ տանող ճանապարհը բավարար մատչելի է նրանց համար:

Գծապատկեր 13. Սենյակների դռների մատչելիությունը (%)



Ինչպես երևում է Գծապատկեր 13-ից, 64 %-ի մոտ դռների լայնությունը մինչև 80 սմ է: Դա նշանակում է, որ այդ դռնով սայլակ օգտագործողը չի կարող ներս մտնել կամ կարող է մտնել շատ մեծ դժվարությամբ: Բացի հաստատություն մուտք գործելիս ունեցած խնդիրները, է սայլակ օգտագործողներրը նաև սենյակներ չեն կարողանում անխոչընդոտ մուտք գործել:

Հաստատությունների ներսում դիտարկվել են նաև սանհանգույցները, որոնք առկա են եղել շինությունների 73 %-ում:

Գծապատկեր 14. Սանհանգույցների մատչելիությունը (%)



Սանհանգույցների դռների նեղությունից բացի, առկա են նաև այլ խնդիրներ, որոնք ևս խոչընդոտում են սայլակների ներս մտնելուն: Մասնավորապես առկա է բարձր շեմ, որը ինքնուրույն հնարավոր չէ անցնել, զուգարանակոնքի մոտ չկան բռնակներ, որ հնարավոր լինի օգտվել զուգարանից: Շատ հաստատություններում էլ դեռևս առկա են սովետական ժամանակաշրջանի զուգարանները, որոնք առանց զուգարանակոնքի են: Մի շարք հաստատություններ էլ իրենց զուգարանները բանալիով կողպում են, որպեսզի միայն իրենք օգտագործեն: Եղել է նաև հաստատություն, որտեղ զուգարան կարող են գնալ միայն վերևի հարկում, որտեղ հաշմանդամը առանց կողմնակի օգնության առհասարակ անհնար է բարձրանա:

Ըստ այլ մեկնաբանությունների այնուամենայնիվ, շինության ներսում սայլակ օգտագործողի համար որոշակիորեն մատչելի է հիմնականում միայն մուտքն ու առաջին հարկը, մյուս հարկերն ու սենյակները, կարելի է ասել ընդհանրապես մատչելի չեն:

2.3 15 հաստատությունների ղեկավարների հետ անցկացված հարցումների ամփոփում

Դիտարկված հանրային նշանակության 15 հաստատությունների ղեկավարների հետ անց են կացվել անհատական հարցազրույցներ՝ իրենց ղեկավարած կառույցներում հաշմանդամություն ունեցողների համար տեղաշարժման մատչելիության ապահովման վերաբերյալ:

Գծապատկեր 15. Մատչելիությունը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար՝ըստ հաստատությունների ղեկավարների (%)



Նշված հաստատությունների ղեկավարների կարծիքով իրենց հաստատությունների 40 %-ը հիմնականում մատչելի են, 46 %-ի կարծիքով՝ մասամբ են մատչելի, միայն 14 %-ն է գտնում, որ իրենց հաստատությունն առհասարակ մատչելի չէ: Նրանցից 40 %-ը նախատեսում է կառույցի բարելավում, իսկ 53 %-ը չի նախատեսում, 7 %-ն էլ գտնում է, որ բարելավումն իր իրավասության մեջ չի մտնում:

Գծապատկեր 16. Նախատեսվող բարելավումները (%)



Գծապատկեր 17. Բարելավումներ չիրականացնելու պատճառները (%)



Հաստատությունների ղեկավարների 33 %-ը նշել են, որ իրենց հաստատություն մշտապես դիմում են հաշմանդամություն ունեցողներ, 40 %-ի խոսքերով՝ իրենց հազվադեպ են դիմում, իսկ 27 %-ը նշել է, որ իրենց ինչպես հաշմանդամություն ունեցողներ, այնպես էլ հենաշարժողական խնդիրներ ունեցողներ ընդհանրապես չեն դիմում: Ըստ նրանց, մշտապես դիմողների միայն 33 %-ն ունի հենաշարժողական խնդիրներ, և այդ խնդիրներ ունեցողների 55 %-ն է բախվում է դժվարությունների:

Գծապատկեր 18. ՀՈՒԱ սպասարկումը հաստատություններում (%)



Գծապատկեր 18-ից երևում է, որ հաստատությունների ղեկավարների 60 %-ը դժվարացել է պատասխանել հաստատություն դիմաց ՀՈՒԱ-ը ինչպես են սպասարկվել աշխատակիցների կողմից: Հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցողների համար այլընտրանքային լուծում կարող են լինել տեղեկատվություն ստանալու այլ միջոցները: Սակայն, ըստ հաստատությունների ղեկավարների 20 %-ի, իրենց ղեկավարած հաստատություն այցելությունը պարտադիր է, այսինքն ՀՈՒԱ- ն անկախ հնարավորությունից պետք է դիմի տվյալ հաստատություն: Հաստատությունների 73 %-ը առցանց դիմելու հնարավորություն ստեղծելով, կարողացել են փոքրիշատե լուծել այդ խնդիրը: Նրանք գտնում են, որ առցանց հարթակից բացի կարող են տեղեկատվություն հաղորդել նաև հեռախոսազանգի միջոցով: 7 %-ի կարծիքով էլ ՀՈՒԱ-ի հարցը կարող են քննարկել լիազորված անձի միջոցով:

Գծապատկեր 19. Ֆիզիկական մատչելիության և միջավայրի բարեփոխման ուղղությամբ կատարարած աշխատանքներ (%)



ՀՈՒԱ խնդիրների լուծման, նրանց համար մատչելի միջավայր ապահովելու համար գնահատելի է արդյունավետ համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ, սակայն հարցվածների միայն 13%-ն է համագործակցում ՀԿ-ների հետ: Նրանք էլ հիմնականում համագործակցել են «Լիարժեք կյանք», «Լուսաստղ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ»,
«Երուսաղեմի Սուրբ Օրդեն», «Խուլերի միավորում» կառույցների հետ: Մյուս մասը՝ որոնք չեն համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ, գտնում են, որ ՀԿ-ների ներկայացուցիչների կողմից առաջարկություններ չեն եղել, նրանցից 13 %-ի կարծիքով էլ դրա անհրաժեշտությունը չի եղել: Ըստ ղեկավարների, բազմիցս եղել են ֆիզիկական մատչելիության ապահովման առաջարկներ, բայց 7%-ը գտնում են, որ դրա մասին կարելի է խոսել միայն քաղաքի վարկային ծրագիրը հաստատվելու դեպքում, իսկ 8 %-ը գտնում է, որ իրենց այլընտրանքային մուտքը կարելի է հարմարեցնել հաշմանդամություն ունեցողներին: 85 %-ը ներկայացնում է, որ բացի մուտքից, հաստատությունների ներսում էլ շատ աշխատանքներ կան կատարելու, նախ պետք է վերելակ և բազրիքներ կառուցել, սանհանգույց վերանորոգել:

Գծապատկեր 20. Մատչելիության ապահովմանն ուղված աշխատանքների իրականացման պատրաստակամությունը (%)



Գծապատկեր 21. Շինարարական աշխատանքների իրականացման հնարավոր ժամկետներ (%)



Գծապատկեր 22. Շինարարական աշխատանքներ չիրականացնելու պատճառները (%)



Հաստատությունների ղեկավարների խոսքով, հաշմանդամություն ունեցողներն այնուամենայնիվ սպասարկվում են, ոմանք տանը՝ աշխատակիցների այցելությունների շնորհիվ, ոմանք էլ՝ փողոցում:

2.4 Հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների հետ հարցազրույցների ամփոփում

Հեռախոսազանգի միջոցով հարցումներին մասնակցել են 200 հաշմանդամություն ունեցողներ: Ըստ տարիքային խմբի 18-28 տարեկանները կազմել են 19 %, 29-38 տարեկանները՝ 13 %, 39-48 տարեկանները՝ 14 %, 49-58 տարեկանները՝ 18 % և 59 տարեկանից բարձրերը՝ 36 %: Ընդհանուր առմամբ նրանցից 43 %-ը եղել են արական սեռի, իսկ 57 %-ը իգական սեռի ներկայացուցիչներ: Հարցվածների 51 %-ը ամուսնացած է, 37 %-ը՝ միայնակ, 12 %-ն էլ ամուսնալուծված, այրի և ամուրի:

Գծապատկեր 23. Հենաշարժողականխնդիրներ ունեցող հաշմանդամների զբաղվածությունը (%)



Գծապատկեր 24. Միջավայրի մատչելիությունը հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար (%)



Գծապատկեր 25. Տնից դուրս գալու հաճախականությունը (%)



Գծապատկեր 26. Տանից դուրս չգալու կամ հազվադեպ դուրս գալու պատճառները (%)



Հենաշարժողական խնդիրներ ունեցողների 40 %-ը տանից դուրս է գալիս միայն անհրաժեշտության դեպքում, նրանցից միայն 6 %-ն է ըստ ցանկության դուրս գալիս: 54 %-ն էլ նշել է, որ և՛ անհրաժեշտության, և՛ ցանկության դեպքում փորձում է դուրս գալ:

Գծապատկեր 27. Որևէ տեղ գնալիս ուղեկցողի անհրաժեշտությունը (%)



Հարցվածների 31 %-ը չի կարողացել բացատրել, թե իրեն ինչ օգնություն է պետք ինքնուրույն դառնալու համար: Նրանցից 16 %-ը նշել է, որ բուժման դեպքում կարող են ինքնուրույնություն ձեռք բերել: «Մատչելի միջավայր, համապատասխան պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ ու սայլակներ ունենալու դեպքում միայն կարելի է խոսել ինքնուրույնության մասին»,- նշել են հարցվածների 53 %-ը:

Գծապատկեր 28. Որտեղ է զգացվում օգնականի անհրաժեշտությունը (%)



Գծապատկեր 29. Այցելե՞լ եք արդյոք պետական կառույցներ, եթե այո, ապա հանդիպ՞ել եք խոչընդոտների (%)



Ինչպես երևում է գծապատկերից, հարցվածների 67%-ը այցելել է պետական կառույցներ, իսկ այցելածներից 69%-ը հանդիպել է ֆիզիկական մատչելիության հետ կապված խոչընդոտների: Նրանցից 55%-ը դժվարացել է կոնկրետ օրինակներ բերել, թե ինչպիսի խոչընդոտների է բախվել, 11%-ի համար հաստատության աստիճաններն այն բարձրության են եղել, որ հնարավոր չի եղել բարձրանալ, իսկ 5 %-ի համար բազրիքների բացակայությունն է խնդիրների առաջ կանգնեցրել: Մյուս մասը՝ 29 %-ը նշում են, որ և փողոցներն են քանդված եղել, և՝ թեքահարթակ չի եղել, և՝ բազրիքներն են բացակայել, և՝ աստիճաններն են բարձր եղել, որևէ կերպ չեն կարողացել սպասարկվել:

Այնուամենայնիվ հարց են ունեցել և այն պետք է եղել լուծել, սակայն դա արել են այլ կերպ: 66%-ը չի կարողացել հիմնավորել, թե ինչպես է իր հարցերին լուծում տվել, նրանցից 9 %-ը սպասարկվել է տանը: 11%-ին օգնության են եկել բարեկամները, ծանոթներն ու կազմակերպությունների անդամները: 14%-ի հարցերն էլ մնացել են անպատասխան:

Գծապատկեր 30. Ըստ Ձեզ, ֆիզիկական մատչելիության ապահովումը հանդիսանո՞ւմ է պետության կողմից պարտավորություն (%)



Ֆիզիկական մատչելիության ապահովումը պետության պարտավորություն համարողների 55 %-ը նշել է, որ ՀՀ քաղաքացիների կարիքները պետությունը պարտավոր է ապահովել, 42 %-ը չի կարողացել իր կարծիքը արտահայտել, հիմնավորել, իսկ 7 %-ը գտնում է, որ յուրաքանչյուր կարիք պետք է ապահովվի երկուստեք:

Գծապատկեր 31. Ֆիզիկական միջավայրի անմատչելիությունը կարո՞ղ է խոչընդոտ հանդիսանալ ծառայությունների հասանելիության հարցում (%)



«Անմատչելիությունը խոչընդոտ կարող է հանդիսանալ, քանի որ մի շարք կազմակերպություններ և ծառայություններ անձամբ պետք է ներկայանալ»-նշել են հարցվածների 54%-ը, իսկ 46 %-ը չի կարողացել հստակ պատասխան տալ: Խոչընդոտ չլինելու հանգամանքը հաստատած հարցվածների 93 %-ը չի կարողացել մեկնաբանել, իսկ մնացած 7 %-ը նշել է, որ կարող են օգտվել թեժ գծից և օնլայն հարթակից:

Գծապատկեր 32. Ֆիզիկական մատչելիության առումով ի՞նչը կցանկանայիք առաջնային կերպով բարեփոխել (%)



Գծապատկեր 33. Երբևէ իրականացրե՞լ եք ազատ տեղաշարժի Ձեր իրավունքի իրացմանն ուղղված գործողություններ (%)



Գծապատկեր 34. Եթե այո, ապա ի՞նչ (%)



Գծապատկեր 35. Եթե ոչ, ապա ինչու՞ (%)



Հարցվածներին հնարավորություն էր տրված այլ մեկնաբանություններով մեկ նախադասությամբ հստակեցեն իրենց ցանկությունները, ասելիքները: 90 %-ը չի ցանկացել որևէ բան նշել, իսկ 3%-ը ցանկություն է հայտնել, որ հաշմանդամություն ունեցողների համար ստեղծվեն հարմարեցված աշխատատեղեր, 2 %-ը նշել է, որ գոյություն ունեցող թեքահարթակները ստանդարտներին չեն համապատասխանում, նրանք իմիջիայլոց են արված: Մյուս 5 %-ն էլ նշում է, որ պետական պատվերով ծառայությունները հասանելի լինեն հաշմանդամություն ունեցողներին, միևնույն ժամանակ այդ կառուցների աշխատողները պատշաճ կատարեն իրենց պարտավորությունները:

Գլուխ 3 Եզրակացություն և առաջարկություններ

3.1 Եզրակացություն

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: Չնայած օրենքում պարբերաբար կատարվել են փոփոխություններ և լրացումներ, այնուամենայնիվ, ամրագրված սկզբունքներն ու մոտեցումները դարձել են ժամանակավրեպ և չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված և ճանաչված չափանիշներին: Գործող օրենսդրությամբ հաշմանդամություն ունեցող անձ է համարվում այն անձը, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Այս մոտեցումը հիմնված է առավելապես հաշմանդամության բժշկական մոդելի վրա, որի դեպքում հաշվի չեն առնվում անձի գործունեության և մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին գործոնները, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ դրանց վրա:

Չնայած վերջին տարիներին հասարակական սեկտորը իրականացրել է հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված մի շարք միջոցառումներ, սակայն իրավիճակը մնում է անբավարար: Հիմնախնդիրը այդպես էլ անբավարար կմնա, քանի որ պետական սեկտորի կողմից դեռևս ծանրակշիռ գործնական քայլեր չեն արվում իրավիճակը փոխելու ուղղությամբ:

Իրավիճակի արմատական և աստիճանական բարելավման համար պետք է մշակել լայնամասշտաբ գործողությունների ծրագիր: Այն կներառի օրինակ՝ մինչև 2025թ. Քաղաքաշինական և ինժեներական ենթակառույցների, տրանսպորտային, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային, սոցիալական ենթակառուցվածքի հիմնարկների հիմնական մատչելիությանը և հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մատչելի միջավայրի ձևավորմանը հնարավոր է հասնել միայն պլանավորված և հետևողական աշխատանքի շնորհիվ՝ քաղաքային իշխանությունների, հասարակական սեկտորի և գործարար շրջանակների համագործակցությամբ:

Գործնականում անհրաժեշտ է ապահովել համապատասխան մեխանիզմներ, որոնք կբացառեն տվյալ գործընթացում մատչելիության շինարարական նորմերի անտեսումը: Բացի այդ, անհրաժեշտ է արդյունավետ կերպով նպաստել ընդունող հանձնաժողովի անդամների իրազեկվածության բարձրացմանը:

Քաղաքաշինության ոլորտում տեսչական մարմինը, որն իրականացնում է վերահսկողական ծառայություններ և կիրառում է պատասխանատվության միջոցներ, պետք է ունենա լայն լիազորություններ և պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը: Տեսչության կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումների աշխատողները պետք է ունենան մատչելիության շինարարական նորմերի և համընդհանուր դիզայնի վերաբերյալ ոչ ֆորմալ կրթության շարունակական հնարավորություններ: Կառույցի հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմները հավելյալ երաշխիքներ են գործընթացների ներառականության ապահովման տեսանկյունից: Անհրաժեշտ է հրապարակել նաև տեսչական ստուգումների մասին մանրամասն տեղեկություններ, ինչը կբարձրացնի նաև քաղաքացիների շրջանում վստահությունը և դիմելիության ցուցանիշը:

3.2 Առաջարկություններ

- Համախոհների հետ մշակել հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժ այլ անձանց համար հասարակական նշանակության վայրերի և հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման օրինագիծ և ներկայացնել ԱԺ:
- Համախոհների հետ մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրինագիծ և ներկայացնել ԱԺ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ- ներին ներգրավել հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծման թույլատվությունների տրամադրման գործընթացում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ- ներին ներգրավել ՀՀ պետական բյուջեի և վարկային միջոցների հաշվին կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծային առաջարկների մշակման գործընթացում:
- Համայնքային բյուջեով նախատեսել գումարներ՝ հանրային նշանակության վայրերում նորմերին համապատասխան թեքահարթակ, վերելակ կառուցելու և այլ հարմարեցումներ իրականացնելու համար և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ ընտրվեն այդ տարածքները:
- Թեքահարթակների, վերելակների համար նախատեսված գումարները տարեցտարի էականորեն աճեն և ներառվեն հաջորդ տարիների բյուջեներում: Այդ գործընթացներին մասնակցեն նաև ՀԿ- ները, որոնց մասնակցությամբ և համապատասխան մասնագետների կողմից տրվեն կատարված աշխատանքների վերջնական գնահատականը:
- Քաղաքապետարան - մասնավոր հատված - ՀԿ հատված համագործակցությամբ ձևավորել ուսումնասիրություն իրականացնող խումբ, բոլոր հանրային օգտագործման վայրերում ձեռնարկել ուսումնասիրություն և արդյունքում դիտարկել, թե նախկինում արդեն կառուցված որ հանրային օբյեկտների դիմաց է հնարավոր կառուցել նորմերին համապատասխան թեքահարթակներ, և այդ նպատակով բոլոր կառույցներին քաղաքապետարանի կողմից տրամադրվեն անվճար նախագծեր:
- Կազմակերպել ուսուցողական դասընթացներ միջավայրի մատչելիության նորմերի վերաբերյալ:
- Առաջարկել նախկինում կառուցված շենքերում գործող հաստատություններին որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման նպատակով առաջին հարկում տրամադրվի փոքրիկ փակ սենյակ (մոտ 3 մ X 3մ)՝ տվյալ կառույցների աշխատակիցների հետ հանդիպումների կազմակերպման համար: Սա ներկայացվի որպես ժամանակավոր լուծում այն շինարարական կառույցներում, որոնց ճարտարապետական նախագծերը թույլ չեն տալիս կառույցի մնացած հարկերը փոփոխության ենթարկել:
- Բարձրացնել ՀՈՒԱ և նրանց ընտանիքների անդամների կարողություններն ու հմտություններն այս ոլորտի վերաբերյալ, որպեսզի վերջիններս կարողանան իրականացնել Շահերի Պաշտպանության արդյունավետ գործողություններ:

Ուսումնասիրված նյութերի ցանկ

1. ՀՀ Սոցիալ-Տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հունիսին՝ կետ 5. Սոցիալ-Ժողովրդագրական հատված՝ http://www.armstat.am/file/article/sv_06_17a_540.pdf,
2. ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիա՝ http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf
3. «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90419
4. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=69797
5. ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի թիվ 392-Ն որոշում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=23339
6. «ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=30091
7. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 5-ի N 43 - Ա հրաման՝ http://www.minurban.am/lows/files/305259015_11.Hraman.pdf?fbclid=IwAR0Cm4zAe_TBUtbxeu571Mh3DHooEzoY2f1Zf3wAP9Cj2J0wJAYXpYK1K5Y
8. «Հաշմանդամություն և ներառական զարգացում» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Հանրակրթական դպրոցների մատչելիությունը. օրենքը գործնականում» մասնակցային մշտադիտարկման զեկույց:

Ֆիզիկական մատչելիության դիտարկման քարտ

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվում է «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագիրը: Ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է «Հանուն հավասար իրավունքների» կոնսորցիումի անդամ հանդիսացող «Լրագրողներ Հանուն Մարդուիրավունքների», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Իրավունքի Ուժ» և «ԱզատԼրագրողներ» ՔՀԿ-ների համագործակցությամբ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ ղեկավարությամբ գործող կոնսորցիումի միջոցով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Հաստատության անվանումը_____

2. Հասցե՝ _____

3. հաստատության հեռախոսահամար՝ _____

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ

Ա. Փողոցը/ բակը

1. մայթեզր (բորդյուր)
   1) կա, բարձրությունը_____սմ 2) չկա **(անցնել հարց 3-ին)**

2. թեքահարթակ
   1) կա_____մետր երկարությամբ ա)_____սմշեմով բ) առանցշեմի

   2) չկա

3. այլ խոչընդոտներ (ոչ մատչելի դարպաս, աստիճաններ _____ հատ և այլն)_____
   _____
   _____

Բ. Մուտքը

1. Անցումներ հաստատություն մոտակա կանգառում:

   ա)Ստորգետնյա

   բ)Վերգետնյա գ)Երկուսն

   էլ առկա են

դ)Երկուսն էլ բացակայում են (չլրացնել Ե հարցը)

ե)Անցումների մատչելիությունը սայլակ օգտագործող անձանց համար (նկարագրել)

_____

_____

Հաստատության մուտք

2. աստիճաններ
   1) կան_____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ 2)չկան **(անցնել հարց 4-ին)**
3. բազրիք աստիճանների մոտ 1) կա 2) չկա
4. թեքահարթակ
   1) կա_____մետր երկարությամբ ա) բազրիքով բ) առանց բազրիքի

   2) չկա, բայց հնարավոր է կառուցել

   3) չկա և հնարավոր չէ կառուցել

   4)այլ

_____

_____

_____

Գ. Մուտքի դուռը

1. փեղկերի քանակը
   1) 1-փեղկանի 2) 2-փեղկանի, 2-րդ փեղկը բացվում է 3) 2-փեղկանի, 2-րդ փեղկը չի բացվում 4) 2-փեղկանի, 2 փեխկը հնարավոր է բացել

2. մեկ փեղկի լայնությունը _____ սմ, երկրորդ փեղկի լայնությունը _____ սմ (եթե տարբերվում է առաջինից)
3. ավելի քան 2 սմ բարձրությամբ շեմ առանց թեքահարթակի 1) կա_____սմ 2) չկա
4. արդյո՞ք դռան ծանրությունը սայլակ օգտագործող այցելուին թույլ է տալիս ինքնուրույն բացել/փակել այն
   1) այո 2) ոչ

   3)այլ պատասխան _____

   _____

5. մուտքի դուռը տանում է դեպի
   1) գետնահարկ 2) վերելակ 3) 1-ին հարկ **(անցնել հարց 4-ին)**

4)այլ

_____

_____

_____

6. դռնից հետո առանց թեքահարթակի աստիճաններ մինչև առաջին հարկ կամ վերելակ հասնելը
   1) կան_____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ
   2) չկան
7. այլ

_____

_____

_____

_____

_____

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՒՏՔԸ (լրացնել, եթե բացի հիմնական մուտքից կա այլ, ավելի մատչելիմուտք)

Ա. Նկարագրությունը

1. այլընտրանքային մուտքի գտվելու վայրը (տեղադրությունը շենքում, հեռավորությունը հիմնական մուտքից)_____

   _____

   _____
2. այլընտրանքայինմուտքինշանակությունը(կարելիէնշելմիքանիտարբերակ).
   1) ծառայողական 3) բեռների համար
   2) սայլակի համար 4) այլ (նշել)_____
3. այլընտրանքային մուտքի հասանելիության ընթացակարգը (միշտ բաց է, կամ բացվում է պահակի կողմից, ում թույլտվությամբ և այլն)

   _____

   _____

Բ. Փողոցը/ բակը

1. մայթեզր (բորդյուր) 1) կա, բարձրությունը_____սմ 2) չկա **(անցնել հարց 22-ին)**
2. թեքահարթակ
   1) կա_____մետր երկարությամբ ա)_____սմ շեմով բ) առանց շեմի
   2) չկա

3. այլ խոչընդոտներ (ոչ մատչելի դարպաս, աստիճաններ ____ հատ և այլն)_____
_____

Գ. Մուտքը

1. աստիճաններ
   1) կան_____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ 2) չկան **(անցնել հարց Դ. հարցին)**
2. բազրիք աստիճանների մոտ 1) կա 2) չկա
3. թեքահարթակ
   1) կա_____մետր երկարությամբ ա) բազրիքով/եզրաշերտով (ընդգծել) բ) առանց բազրիքի/եզրաշերտի

   2) չկա, բայց հնարավոր է կառուցել

   3) չկա և հնարավոր չէ կառուցել

4. Թեքահարթակի ծածկի առկայություն
   1)Առկա է 2) բացակայում է

5. Թեքահարթակի նյութը _____

Դ. Մուտքի դուռը

1. փեղկերի քանակը
   1) 1-փեղկանի 2) 2-փեղկանի, 2-րդ փեղկը բացվում է 3) 2-փեղկանի, 2-րդ փեղկը չի բացվում
2. մեկ փեղկի լայնությունը_____սմ, երկրորդ փեղկի լայնությունը_____սմ (եթե տարբերվում է առաջինից)
3. ավելի քան 2 սմ բարձրությամբ շեմ առանց թեքահարթակի 1) կա_____սմ 2) չկա
4. մուտքի դուռը տանում է դեպի 1) գետնահարկ 2) վերելակ 3) առաջին հարկ **(անցնել հարց 6-ին)**
5. առանց թեքահարթակի աստիճաններ մինչև առաջին հարկ կամ վերելակ (եթե վերելակը ավելի մոտ է) հասնելը
   1) կան____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ 2) չկան
6. այլ
   _____
   _____

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ

Ա. Ընդհանուր նկարագրություն

1. հասարակական օգտագործման համար նախատեսված հարկերը (նկարագրել)

_____

_____

_____

2. առանց թեքահարթակի աստիճաններ առաջին հարկի տարածքում, այցելուի համար նշանակություն ունեցող սենյակի մուտքի ճանապարհին **(լրացնել, եթե առաջին հարկը նախատեսված է հասարակական օգտագործման համար)**

   1) կան_____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ 2) չկան

3. այլ խոչընդոտներ առաջին հարկի տարածքում (նեղ միջանցք և այլն)

_____

_____

_____

4. արդյո՞ք հաստատության առաջին հարկում առկա է ընդունարան կամ այլ սենյակ, որը կարող է ծառայել, որպես այցելուների սպասարկման վայր (մեկ պատուհանի սկզբունքով)

   1) առկա է (անցնել հարց 5-ին) 2) առկա չէ

5. Ընդունարանի արտաքին տեսքը (սեղան, վերջինիս բարձրությունը, դռների առկայություն և այլն) -

_____

_____

_____

6. Սայլակով մարդու համար երթևեկելու հնարավորությունը ներսում (Որքա՞ն տարածություն է ներսում)_____

_____

_____

_____

7. խոչընդոտներ հասարակական օգտագործման համար նախատեսված մյուս հարկերի տարածքում___

_____

_____

_____

Բ. Վերելակի առկայություն (լրացնել, եթե մյուս հարկերը կարևորություն են ներկայացնում հաստատության գործառնության տեսանկյունից)

1. վերելակ

   1) կա, դռների ընդհանուր լայնությունը_____սմ 2) չկա **(անցնել հարց Գ.1. հարցին)**

2. վերելակի խորությունը _____սմ
3. մինչև վերելակ առանց թեքահարթակի աստիճաններ առաջին հարկում
   1) կան_____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ 2) չկան

4. մինչև վերելակ առանց թեքահարթակի աստիճաններ մյուս հարկերում (եթե տարբեր հարկերում տարբեր քանակի են, նշել առավելագույն քանակը)
   1) կան_____հատ, մեկաստիճանի բարձրությունը_____սմ 2) չկան

5. այլ
   _____
   _____

Գ. Սենյակներ (կամ սրահներ) և սանհանգույց

1. սենյակների դռների լայնությունը_____սմ (եթե տարբեր է, նշել կարևորություն ներկայացնող սենյակներից ամենանեղ դռների լայնությունը: **Եթե դռները երկփեղկանի են և 2-րդ փեղկը բացվում է, նշել փեղկերի ընդհանուր լայնությունը**)
2. կա՞ արդյոք հասարակական սանհանգույց 1) կա 2) չկա **(անցնել հարց 5-ին)**
3. սանհանգույցի դռան լայնությունը_____սմ
4. սանհանգույցի մատչելիությունը սայլակ օգտագործող անձանց համար
   1) մատչելի է
   2) մատչելի չէ (բացատրել) _____
5. այլ
   _____
   _____

ԱՅԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

_____

_____

_____

Լրացրեցին (անուն, ազգանուն)

_____

Ստորագրություն_____Ամսաթիվ_____Համայնք _____

Ընդունեց՝ _____

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Պետական կառույցների տնօրենների/ղեկավար անձանց հետ

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվում է «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագիրը: Ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է «Հանուն հավասար իրավունքների» կոնսորցիումի անդամ հանդիսացող «Լրագրողներ Հանուն ՄարդուԻրավունքների», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Իրավունքի Ուժ» և «ԱզատԼրագրողներ» ՔՀԿ-ների համագործակցությամբ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ ղեկավարությամբ գործող կոնսորցիումի միջոցով:

1. Ի՞նչ հաստատություն եք դուք ներկայացնում _____
2. Ի՞նչ պաշտոն եք զբաղեցնում, քանի՞ տարի եք աշխատում այս հաստատությունում
   _____
3. Ի՞նչ է մատչելիությունը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար_____
   _____
   _____
4. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր կազմակերպության/կառույցի շենքային պայմանները ֆիզիկական մատչելիության տեսակետից՝ հարթ մուտքեր, թեքահարթակներ, դռների լայնություն, սեղանների և պահարանների բարձրություն / 4a) պատասխանի դեպքում անցնել 6-րդ հարցին/

   4a) Ամբողջովին մատչելի 4b)

   Հիմնականում մատչելի 4c)

   Դժվարամատչելի

   4d) Անմատչելի

5. Առաջիկա ռազմավարության մեջ ունե՞ք գործողություններ՝ ուղղված ձեր հաստատության ֆիզիկական մատչելիության բարելավմանը:

   5a) այո _____

   5b) ոչ (ինչո՞ւ) _____

6. Ձեր հաստատությունորևէ հարցով դիմե՞լ է արդյոք հենաշարժողական խնդրով անձ

   6a) այո, մշտապես դիմում են (ի՞նչ տեսակի հաշմանդամությամբ)_____

   _____

   6b) այո, բայց շատ հազվադեպ 6c)

   ոչ (անցնել 8-րդ հարցին)

7. Արդյո՞ք այդ դիմելու ընթացքումանձը (անձինք) հանդիպել է(են) ֆիզիկական խոչընդոտների՝ կապված շենքային պայմանների հետ:

   7a) այո _____

   7b) ոչ

8. Արդյո՞ք ձեր հաստատությունն դիմելու կամ բոլոր ստորաբաժանումներից տեղեկատվություն ստանալու համար պարտադիր է կատարել այցելություն, թե՞ գործում են նաև հաղորդակցման այլընտրանքային տարբերակներ, օրինակ օնլայն հարթակ և այլն:

_____

_____

Եղե՞լ են դեպքեր, երբ հաստատությունում ֆիզիկական մատչելիության ապահովմանն ուղղված բարեփոխումներ իրականացնելիս համագործակցել եք հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

8a) այո, համագործակցել ենք (ո՞ր ՀԿ•ների հետ)

_____

8b) ոչ, չենք համագործակցել (ինչո՞ւ) _____

8c) բարեփոխումներ չենք իրականացրել_____

9. Այլ նկատառումներ և մեկնաբանություններ, ֆիզիկական մատչելիության խթանմանն ուղղված առաջարկություններ

_____

_____

_____

10. Հաստատության ղեկավարի՝ շենքը մատչելի դարձնելու պատրաստակամությունը

11a պատրաստ է_____օրվա / ամսվա / տարվա ընթացքում (նշել թիվը և ընդգծել ճիշտ տարբերակը)

11b պատրաստ չէ, պատճառը՝ (կարելի է նշել մեկից ավել տարբերակ) 11ba

ֆինանսների բացակայություն

11bb գտնում է, որ նպատակահարմար չէ (իմաստ չկա) 11bc

դիզայնը կփչանա

11bd խոչընդոտում են պետական մարմինները (կադաստր և այլն) 11be այլ

պատասխան _____

օր, ամիս, տարի _____

հարցաթերթը լրացրեցին _____

կառույցի պատասխանատուի աշխատասենյակի տեղակայումը _____

_____

համայնք _____

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

հաշմանդամություն ունեցող անձանց համար

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվում է «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագիրը: Ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է«Հանուն հավասար իրավունքների» կոնսորցիումի անդամ հանդիսացող «Լրագրողներ Հանուն Մարդուիրավունքների», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Իրավունքի Ուժ» և «ԱզատԼրագրողներ» ՔՀԿ-ների համագործակցությամբ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ ղեկավարությամբ գործող կոնսորցիումի միջոցով:

1. Պատմեք Ձեր մասին.

a) տարիք _____

b) սեռ _____

c) ընտանեկան վիճակ _____

d) զբաղմունք _____

e) օգտագործո՞ւմ եք արդյոք օժանդակող (սայլակ, քայլակ, հենափայտ, ձեռնափայտ, օրթեզ և այլ) պարագաներ (ընդգծել բոլոր օգտագործվող պարագաները)

f) այլ (ըստ ցանկության) _____

_____

2. Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիության վիճակը 10 բալանոց սանդղակով (1՝ շատ վատ, 10՝ գերազանց)

_____

3. Որքանո՞վ հաճախ եք Դուք դուրս գալիս տանից (3d կամ 3e տարբերակների դեպքում անցնել 5-րդ հարցին)

3a	Ընդհանրապես դուրս չեմ գալիս	
3b	Տարին մեկ անգամ	
3c	Ամիսը մեկ անգամ	
3d	Շաբաթը մեկ անգամ	
3e	Ամեն օր	

4. Մանրամասնեք տանից դուրս չգալու կամ հազվադեպ դուրս գալու պատճառները (անցնել 6-րդ հարցին)

_____

_____

5. Արդյո՞ք տանից դուրս եք գալիս՝

5a ըստ ցանկության

5b միայն անհրաժեշտությունից ելնելով 5c

երկուսի դեպքում էլ:

6. Արդյո՞ք որևէ տեղ գնալու համար Ձեզ անհրաժեշտ է օգնություն (Ոչ պատասխանի դեպքում անցնել 9- րդ հարցին)
   6a Այո

   6b Ոչ, ես լիովին ինքնուրույն եմ տեղաշարժվում և օգնականի կարիք չեմ զգում

7. Ի՞նչը կօգներ Ձեզ դառնալ ավելի ինքնուրույն

_____

_____

_____

8. Որտե՞ղ եք զգում օգնականի կարիք (ընտրեք բոլոր հնարավոր տարբերակները) 8a տուն

   8b բակ/փողոց 8c

   տրանսպորտ

   8d այցելության նպատակի վայրեր/հաստատություններ 8e

   ամենուր

9. Արդյո՞ք երբևէ այցելել եք պետական որևէ կառույց (անձնագրային բաժանմունք, քաղաքապետարան/գյուղապետարան, համայնքապետարան, հարկ վճարողների սպասարկման վարչություն, սոցիալական ծառայության ապահովության տարածքային բաժին, զբաղվածության կենտրոն, դատարան, նոտարի գրասենյակ, ոստիկանություն և այլն)
   9a Այո

   9b Ոչ (անցնել 11-րդ հարցին)

10. Այցելության ընթացքում հանդիպե՞լ եք արդյոք ֆիզիկական անմատչելիությամբ պայմանավորված խնդիրների
    - ✓ Այո_____(անցնել 12•րդ հարցին)
    - ✓ Ոչ

11. Այցելություն չկատարելու դեպքում, ինչպե՞ս եք լուծել այս կամ այն պետական մարմնի հետ կապված խնդիրը, օրինակ՝ անձնագիր ստանալու

_____

_____

12. Ի՞նչ եք կարծում, ֆիզիկական մատչելիության ապահովումը հանդիսանո՞ւմ է պետության կողմից պարտավորություն
12a Այո (մանրամասնեք) _____

12b Ոչ

13. Ի՞նչ եք կարծում, ֆիզիկական միջավայրի անմատչելիությունը կարո՞ղ է խոչընդոտ հանդիսանալ ծառայությունների հասանելիության հարցում:
13a Այո (ինչո՞ւ) _____

13b Ոչ (ինչո՞ւ) _____

14. Ֆիզիկական մատչելիության առումով ի՞նչը կցանկանայիք, որ առաջնային կերպով բարեփոխվի

_____

_____

15. Երբևէ իրականացրե՞լ եք գործողություններ՝ ուղղված ազատ տեղաշարժի Ձեր իրավունքի իրացմանը

15a Այո (մանրամասնեք) _____

15b Ոչ (ինչո՞ւ) _____

16. Այլ նկատառումներ կամ մեկնաբանություններ

_____

_____

Հարցվողի հեռախոսահամարը _____

օր, ամիս,տարի _____

հարցաթերթը լրացրեց _____

կոնտակտներ _____

համայնք _____